

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ՀԲՄԱՇՁԲ-22/1-1**

ք. Երևան

« 24 » հոկտեմբերի 2022 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է Աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բոֆֆո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արա Մանուկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման (արտաքին լուսավորության համակարգի վերանորոգման) աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 62 օրացուցային օր, բայց ոչ ուշ քան դեկտեմբերի 25-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն **100 տոկոսը կատարել անձամբ**, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___15___ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **114 960 000 (մեկ հարյուր տասնչորս միլիոն ինը հարյուր վաթսուս հազար) ՀՀ դրամ, որից 19 160 000 (տասնինը միլիոն հարյուր վաթսուս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուին ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով յուրաքանչյուր ֆինանսական տարում ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրերի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ
Հ/Հ 02505554



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բոֆֆո» ՍՊԸ
ք. Երևան, Ա.Ավետիսյան 70-72
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015445090100
ՀՎՀՀ 00121699

/ստորագրություն/
Կ.Տ



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
 Շենքերի եւ շինությունների բնօրինակ նորոգման աշխատանքների կատարման

ՀՀ դրամ

№	Անվանում	Նշանակումը նախագծում	Տեխնիկական բնութագիր	Չափման միավոր	Քանակ	միավոր գին	Ընդամենը
<p>N կառավարական տուն 1 շենքի (Նալբանդյան փ. Ճակատ, Ֆին. Նախ.-ի անկյուն, աշտարակ, գլխավոր մուտք, Տիգրան Մեծ փ. Ճակատ, Մ. Աղայան անկյուն)</p>							
1	Լուսատիության լուսարձակ	A	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 60Կտ, լուսային հոսք՝ 5700 lm, լույսի ցրման անկյունը՝ 10x70° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x1000mm, ամրակ 66mm, հակակորացնող շերտավարագույրով	հատ	20	135000	2,700,000

2	Լուսադիոդային լուսարձակ	B	<p>Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 60Վտ, լուսային հոսք՝ 5720 lm, լույսի ցրման անկյունը՝ 20° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x1000mm, ամրակ 66mm, հակակորուցնող շերտավառագույրով</p>	հաս	56	135000	7,560,000
3	Լուսադիոդային լուսարձակ	C	<p>Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 48Վտ, լուսային հոսք՝ 3800 lm, լույսի ցրման անկյունը՝ 20° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x500mm, ամրակ 66mm, հակակորուցնող շերտավառագույրով</p>	հաս	14	105000	1,470,000
4	Լուսադիոդային լուսարձակ	D	<p>Մուտքային լարումը DC24V, հզորությունը՝ 12 Վտ, լուսային հոսք՝ 1100 lm, լույսի ցրման անկյունը՝ 40° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ L166X56xh110mm</p>	հաս	50	46500	2,325,000

5	Լուսադիտողային լուսարձակ	D*	Մուտքային լարումը DC24V, հզորությունը՝ 12 Վտ, լուսային հոսք՝ 1100 lm, լույսի ցրման անկյունը՝ 30° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ L166X56xh110mm	հաս	16	46500	744,000
6	Լարման փոխավերայիչ		Մուտքային լարումը 220Վ, ելքայինը՝ 24Վ, հզորությունը՝ 200 Վտ, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP67	հաս	6	49500	297,000
7	Լարման փոխավերայիչ		Մուտքային լարումը 220Վ, ելքայինը՝ 24Վ, հզորությունը՝ 100 Վտ, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP67	հաս	1	42700	42,700
8	Լուսադիտողային լուսարձակ	E	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 150 Վտ, լուսային հոսք՝ 10600 lm, լույսի ցրման անկյունը՝ 120° լուսային ջերմասիճանը՝ CCT 2000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>70, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66	հաս	30	133000	3,990,000
9	Լուսադիտողային լուսարձակ	F	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 20 Վտ, լուսային հոսք՝ 1640 lm, լույսի ցրման անկյունը՝ 12° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66 Չափեր՝ D118XH260mm	հաս	16	75500	1,208,000

10	Լուսադիոդային լուսարձակ	G	<p>Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 95-վտ, լուսային հոսք՝ 8100 lm, լույսի ցրման անկյունը՝ 40° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x1000mm, ամրակ 66mm, հակակորացնող շերտավառագույրով</p>	հաս	2	147000	294,000
11	Լուսադիոդային լուսարձակ	H	<p>Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 48-վտ, լուսային հոսք՝ 3800 lm լույսի ցրման անկյունը՝ 20° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x500mm, ամրակ 120mm</p>	հաս	56	106000	5,936,000
12	Լուսադիոդային լուսարձակ	J	<p>Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 48-վտ, լուսային հոսք՝ 3650 lm, լույսի ցրման անկյունը՝ 10x70° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x500mm, ամրակ 120mm</p>	հաս	11	106000	1,166,000

13	Լուսադիոդային լուսարձակ	M	<p>Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 60Վտ, լուսային հոսք՝ 5850 lm, լույսի ցրման անկյունը՝ 60° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x1000mm, ամրակ 66mm, հակակոլրացնող 2երտավարագույրով</p>	հաստ	12	137000	1,644,000
14	Լուսադիոդային լուսարձակ	N	<p>Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 95Վտ, լուսային հոսք՝ 8100 lm լույսի ցրման անկյունը՝ 60° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x1000mm, ամրակ 66mm, հակակոլրացնող 2երտավարագույրով</p>	հաստ	6	147000	882,000
15	Լուսադիոդային լուսարձակ	O	<p>Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 48Վտ, լուսային հոսք՝ 3880 lm լույսի ցրման անկյունը՝ 40° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x500mm, ամրակ 120mm</p>	հաստ	8	106000	848,000

16	Լուսադիոդային լուսարձակ	S	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 12 Վտ, լուսային հոսք՝ 1100 lm լույսի ցրման անկյունը՝ 40° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ L166X56xh110mm	հաստ	8	48000	384,000
17	Լուսադիոդային լուսարձակ	P	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 200 Վտ, լուսային հոսք՝ 20500 lm, լույսի ցրման անկյունը՝ 120° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66	հաստ	6	144000	864,000
18	Լուսադիոդային լուսարձակ	R	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 150 Վտ, լուսային հոսք՝ 12000 lm լույսի ցրման անկյունը՝ 30° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66	հաստ	4	135000	540,000
19	Բաշխիչ վահան		Արտաքին տեղադրման, 54 տեղանոց մետաղական	հաստ	1	92000	92,000
20	Բաշխիչ վահան		Արտաքին տեղադրման, 12 տեղանոց մետաղական	հաստ	1	24000	24,000
21	Եռաֆազ ավտոմատ անջատիչ		3 ֆազ 50A սոմինալով 3P (C տիպ)	հաստ	1	23000	23,000
22	Միաֆազ ավտոմատ անջատիչ		1 ֆազ 40A սոմինալով 1P (C տիպ) 6kA	հաստ	1	7000	7,000

23	Միաֆազ ավտոմատ անջատիչ	1 ֆազ 25A նսմխալով 1P (C տիպ) 6kA	հաս	11	4200	46,200
24	Միաֆազ ավտոմատ անջատիչ	1 ֆազ 20A նսմխալով 1P (C տիպ) 6kA	հաս	3	4200	12,600
25	Միաֆազ ավտոմատ անջատիչ	1 ֆազ 16A նսմխալով 1P (C տիպ) 6kA	հաս	2	4200	8,400
26	Միաֆազ ավտոմատ անջատիչ	1 ֆազ 10A նսմխալով 1P (C տիպ) 6kA	հաս	2	4200	8,400
27	Եռաբեւեռ թողարկիչ	AF38-30-00, , 230V DC	հաս	3	41000	123,000
28	Եռաբեւեռ թողարկիչ	AF26-30-00, , 230V DC	հաս	4	25000	100,000
29	Եռաբեւեռ թողարկիչ	AF16-30-00, , 230V DC	հաս	2	23000	46,000
30	Ժամանակի ռելե	Ծրագրավորվող անալոգային ժամանակաչափ, 100 ժամ ընթացքի հիշողություն, 250V, 50/60 Hz, 16A	հաս	3	16500	49,500
31	Մալուխ ՅՅԴԻԴ 5x6մմ ²	Պզձե, բազմաջիղ, 5 լարանի, կտրվածքները՝ 6մմ ² , պոլիպիլի թլորիդ մեկուսացման շերտով	Մ	10	2000	20,000
32	Մալուխ ՅՅԴԻԴ 3x6մմ ²	Պզձե, բազմաջիղ, 3 լարանի, կտրվածքները՝ 6մմ ² , պոլիպիլի թլորիդ մեկուսացման շերտով	Մ	170	1500	255,000

33	Մալուխ BԲԴԻԴ 3x4մմ2	Պզնձե, բազմաշիդ, 3 լարանի, կտրվածքները՝ 4մմ2, պոլիլինիլ բլորիդ մեկուսացման շերտով	Մ	400	1050	420,000
34	Մալուխ BԲԴԻԴ 3x2.5մմ2	Պզնձե, բազմաշիդ, 3 լարանի, կտրվածքները՝ 2.5մմ2, պոլիլինիլ բլորիդ մեկուսացման շերտով	Մ	680	700	476,000
35	Մալուխ BԲԴԻԴ 3x1.5մմ	Պզնձե, բազմաշիդ, 3 լարանի, կտրվածքները՝ 1.5մմ2, պոլիլինիլ բլորիդ մեկուսացման շերտով	Մ	1480	500	740,000
36	Մալուխ BԲԴԻԴ 2x1.5մմ2	Պզնձե, բազմաշիդ, 2 լարանի, կտրվածքները՝ 1.5մմ2, պոլիլինիլ բլորիդ մեկուսացման շերտով	Մ	120	370	44,400
37	Բաշխիչ տուլի	Բաշխիչ տուլի, 4 մուտքով, միացման դետալներով, պոլիլինիլբլորիդից, միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP55.	հատ	315	600	189,000
38	Միացման գլանակ	3x1.5 մալուխի համար, միջավայրի պաշտպանվածության աստիճանը IP55	հատ	34	3000	102,000
39	Հերմետիկ	Բաշխիչ տուլիների մեկուսացման համար	հատ	26	1700	44,200
40	Պտուտակային միակցիչ	3x1.5մմ մալուխի համար	հատ	835	80	66,800
41	Մալուխի ամրակ	3x1.5մմ մալուխի համար	տուլի	94	900	84,600
42	Պտուտակ-ոյուլբել		հատ	650	70	45,500
43	Ավտոաշտարակ 22մ		օր	6	50000	300,000
44	Ավտոաշտարակ 32մ		օր	2	70000	140,000

45	Գոյություն ունեցող լուսատուների ապամոնտաժում		հատ	265	1850	490,250
46	Կիրյունաբերական ալպինիստ (2 հոգի, 8 ժամ)		օր	1	40000	40,000
Ընդամենը՝ 1-ին բաժնի աշխատանքներ						
36,892,550						

Հայաստանի ազգային պատկերասրահի և Հայաստանի պատմության թանգարանի շենքեր

1	Գծային լուսադիորային լուսարձակ	A	Մուտքային լարումը՝ DC24V, լույսի հզորությունը՝ 18W, լուսային հոսք՝ 1200 lm, լույսի ցրման անկյունը՝ 10x60°, լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66	հատ	54	32,800	1,771,200
	Լարման փոխակերպիչ		Չափեր՝ 25x25x1000mm, 80mm ամրակ, հակակլորացնող շերտավալորագույրով	հատ	6	49,600	297,600
3	Գծային լուսադիորային լուսարձակ	D	Մուտքային լարումը 220Վ, ելքայինը՝ 24Վ, հզորությունը՝ 200 Վտ, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP67	հատ	34	135,000	4,590,000
			Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 60Վտ, լուսային հոսք՝ 5700 lm, լույսի ցրման անկյունը՝ 20° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 70x75x1000mm (ամրակով բարձրությունը՝ H122mm)	հատ			

4	Գծային լուսադիոդային լուսարձակ	B	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 60Վտ, լուսային հոսք՝ 5800 lm, լույսի ցրման անկյունը՝ 30° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 70x75x1000mm (ամրակով բարձրությունը՝ H122mm)	հատ	4	135,000	540,000
5	Գծային լուսադիոդային լուսարձակ	C	Մուտքային լարումը՝ DC24V, լույսի հզորությունը՝ 18W, լուսային հոսք՝ 1200 lm, լույսի ցրման անկյունը՝ 10x60°, լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66 Չափեր՝ 25x25x1000mm, 45mm ամրակ,	հատ	38	32,800	1,246,400
6	Լարման փոխակերպիչ		Մուտքային լարումը 220Վ, ելքայինը՝ 24Վ, հզորությունը՝ 200 Վտ, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP67	հատ	2	49,600	99,200
7	Լարման փոխակերպիչ		Մուտքային լարումը 220Վ, ելքայինը՝ 24Վ, հզորությունը՝ 250 Վտ, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP67	հատ	2	54,000	108,000
8	Գծային լուսադիոդային լուսարձակ	E	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 60Վտ, լուսային հոսք՝ 5700 lm, լույսի ցրման անկյունը՝ 20° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x1000mm, ամրակ 66mm, հակակորացնող շերտավարագույրով	հատ	16	135,000	2,160,000

9	Գծային լուսարդիորային լուսարձակ	F	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 60-վտ, լուսային հոսք՝ 5700 lm, լույսի ցրման անկյունը՝ 10x70° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x1000mm, ամրակ 66mm, հակակուրացնող շերտավարագույրով	հաս	14	135,000	1,890,000
10	Գծային լուսարդիորային լուսարձակ	G	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 95-վտ, լուսային հոսք՝ 5700 lm, լույսի ցրման անկյունը՝ 10x70° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x1000mm, ամրակ 66mm, հակակուրացնող շերտավարագույրով	հաս	4	147,000	588,000
11	Գծային լուսարդիորային լուսարձակ	H	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 42-վտ, լուսային հոսք՝ 3600 lm, լույսի ցրման անկյունը՝ 20° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 58x70x1000mm, (բարձրությունը ամրակով H118մմ), հակակուրացնող շերտավարագույրով	հաս	16	128,500	2,056,000

12	Գծային լուսարդիորային լուսարձակ	U	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 284-տ, լուսային հոսք՝ 2100 lm, լույսի ցրման անկյունը՝ 60° լուսային շերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 58x70x1000mm, ամրակ 30սմ	հաստ	16	115,000	1,840,000
13	Գծային լուսարդիորային լուսարձակ	J	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 484-տ, լուսարդիորային էֆեկտիվությունը՝ >110լմ/Վտ, լույսի ցրման անկյունը՝ 20° լուսային շերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x500mm, ամրակ 66mm, հակակուրացնող շերտավարագույրով	հաստ	4	106,000	424,000
14	Գծային լուսարդիորային լուսարձակ	K	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 484-տ, լուսային հոսք՝ 3800 lm, լույսի ցրման անկյունը՝ 60° լուսային շերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x500mm, ամրակ 36mm	հաստ	4	106,000	424,000
15	Գծային լուսարդիորային լուսարձակ	L	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 304-տ, լուսային հոսք՝ 2200 lm, լույսի ցրման անկյունը՝ 60° լուսային շերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x300mm, ամրակ 36mm	հաստ	4	101,000	404,000

16	Գծային լուսարդիորային լուսարձակ	M	Մուտքային լարումը AC100-240V, հզորությունը՝ 30-վտ, լուսային հոսք՝ 2200 lm, լույսի ցրման անկյունը՝ 20° լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66, Չափեր՝ 56x60x300mm, ամրակ 36mm, հակակուրացնող շերտավարագույրով	հաստ	4	101,000	404,000
17	Գծային լուսարդիորային լուսարձակ	N	Մուտքային լարումը՝ DC24V, լույսի հզորությունը՝ 18W, լուսային հոսք՝ 1200 lm, լույսի ցրման անկյունը՝ 10x60°, լուսային ջերմասիճանը՝ CCT 3000K, գունափոխանցման գործակիցը՝ CRI>80, միջավայրից պաշտպանության աստիճանը՝ IP66 Չափեր՝ 25x25x1000mm, 80mm ամրակ, հակակուրացնող շերտավարագույրով	հաստ	14	32,800	459,200
